ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ինտոֆֆ Արմենիա» կրթամշակութային հասարակական կազմակերպության միջև

MEMORANDUM

OF COLLABORATION

“Republican Pedagogical-Psychological Center” State Non-Commercial Organization and “Intoff Armenia” Educational and Cultural Non-Governmental Organization

ք. Երևան 13 Դեկտեմբեր, 2024

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ (այսուհետ՝ Կողմ 1 կամ «ՀՄԿ»)՝ ի դեմս տնօրեն Լիլիթ Մնացականյանի և, «Ինտոֆֆ Արմենիա» կրթամշակութային հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կողմ 2 կամ «Ինտոֆֆ Արմենիա ՀԿ»)՝ ի դեմս տնօրեն՝ Եղիշե Դաշտոյանի (միասին՝ այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին համագործակցության մասին սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հուշագրի առարկան Կողմերի միջև կրթական միջավայրի զարգացման, ուսումնական գործընթացներում, արտերկրի բուհական և կրթական այլ կառույցների հետ փորձի փոխանակման և այլ ուղղություններում, ինչպես նաև միջմշակութային շփման կազմակերպման ոլորտում համագործակցությունն է:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Կողմերը համագործակցում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Փոխայցելությունների կազմակերպման միջոցով Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և կենտրոնին ենթակա կառույցների աշխատակիցներին ծանոթացնել արտերկրի կրթական կառույցների ուսումնական միջավայրերին, ծրագրերին, ուսումնական գործընթացի կազմակերպման և դասավանդման մեթոդիկային, ներառական կրթության կազմակերպման առաջավոր փորձին, կրթության կազմակերպման այլ առանձնահատկություններին, ինչպես նաև արտերկրի վերոնշյալ հաստատությունների ներկայացուցիչներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի առանձնահատկություններին և ՀՄԿ-ի կողմից իրականացվող գործունեությանը:

“Republican Pedagogical-Psychological Center” SNCO (hereinafter referred to as Party 1 or “RPPC”), represented by Director Lilit Mnatsakanyan, and the “Intoff Armenia” Educational and Cultural Non-Governmental Organization (hereinafter referred to as Party 2 or “Intoff Armenia NGO”), represented by Director Egishe Dashtoyan (together, hereinafter referred to as “Parties”), have signed the present Memorandum of Collaboration (hereinafter referred to as the Memorandum) on the following:

1. SUBJECT OF THE MEMORANDUM

The subject of the Memorandum is the collaboration between the Parties in the development of the educational environment, educational processes, exchange of experience with foreign universities and other educational institutions and in other areas, as well as in the organization of intercultural communication.

2. MAIN AREAS OF THE COLLABORATION

2.1. The Parties collaborate in the following main areas:

- Introduce the employees of the Republican Pedagogical-Psychological Center and the institutions under the center to the educational environments, programs, methods of organizing the educational process and teaching, advanced experience in organizing inclusive education, and other peculiarities of organizing education of foreign educational institutions through the organization of mutual visits, as well as to introduce the representatives of the above-mentioned foreign institutions to the peculiarities of the educational system of the Republic of Armenia and the activities carried out by the RPPC.

13 December 2024

- Փոխայցելությունների միջոցով ՀՄԿ աշխատակիցներին ծանոթացնել արտերկրի պատմամշակութային, կրթական ժառանգությանը հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ առկա են ճանաչված նախակրթարաններ, դպրոցներ, բուհեր, կրթական այլ կառույցներ, ինչպես նաև արտերկրի համանման կառույցների ներկայացուցիչներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության պատմամշակութային և կրթական ժառանգությանը.
- Կազմակերպել և իրականացնել սեմինարներ, խորհրդակցություններ, կլոր-սեղան քննարկումներ, վերապատրաստումներ, գիտաժողովներ և կրթական ու ճանաչողական բնույթի այլ միջոցառումներ, ինչպես նաև նպաստել կազմակերպությունների միջև մշակութային հաղորդակցության կայացմանը:

2.2. Կազմակերպել և իրականացնել վերը թվարկված ուղղությունների բովանդակությանը համահունչ այլ միջոցառումներ՝ անհրաժեշտության դեպքում փոխադարձաբար որպես փորձագետներ ներգրավելով երկու կողմերի մասնագետներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, հավասար իրավունքների և գործընկերության սկզբունքների վրա:

3.2. Հուշագրի կնքման և կատարման հետ կապված Կողմերի փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ:

3.3. Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական կամ գույքային պարտավորություններ չի առաջացնում:

3.4. Հուշագրի շրջանակներում կազմակերպվող և իրականացվող յուրաքանչյուր միջոցառման անհրաժեշտ ֆինանսական ծախսերի շուրջ Կողմերը ձեռք են բերում առանձին պայմանավորվածություն, որը ձևակերպվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Introduce the RPPC employees to the historical, cultural, and educational heritage of foreign countries through mutual visits, especially in regions where there are well-known preschools, schools, universities, and other educational institutions, as well as to introduce representatives of similar institutions abroad to the historical, cultural, and educational heritage of the Republic of Armenia.
- Organize and implement bilateral and multilateral seminars, consultations, roundtable discussions, trainings, scientific conferences, and other educational and cognitive events, as well as to promote cultural communication between the organizations.

2.2. Organize and implement other events consistent with the content of the areas mentioned above, mutual involvment of specialists from both sides as experts, if necessary.

3. OTHER CONDITIONS

3.1. The Parties collaborate per Legislation of the Republic of Armenia, based on the principles of mutual respect, equal rights, and partnership.

3.2. The relationship between the Parties related to the signing and execution of the present Memorandum is characterized by special trust shown to each other.

3.3. The Memorandum does not create financial or property obligations for any of the Parties.

3.4. The Parties shall reach a separate agreement on the necessary financial expenses of each event organized and implemented within the framework of the Memorandum, which is formulated in accordance with the procedure prescribed by the RA Legislation.

4. FINAL PROVISIONS

4.1. The Memorandum enters into force upon signature of the Parties.

4.2. Disputes between the Parties are resolved through negotiations, and in accordance with the

4.3. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

4.4. Հուշագրի դրույթների չկատարման կամ ոչ բարեխիղճ կատարման դեպքում՝ դրա գործողությունը չի դադարում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

4.5. Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

4.6. Հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից, կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով և կնքվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք հավասարազոր են: Հայերեն և անգլերեն լեզուներով տեքստերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում հայերեն լեզվով տեքստը գերակայող է:

procedure established by the RA Legislation in case of failure to reach an agreement.

4.3. The operation of the Memorandum can be terminated by mutual agreement of the Parties. The Memorandum may be terminated early at the initiative of either Party by giving written notice to the other Party no later than 1 (one) month before the date of intended termination.

4.4. In case of non-fulfillment or non-conscientious fulfillment of the provisions of the Memorandum, its operation shall not be suspended if this occurred as a result of force majeure.

4.5. Amendments and additions to the Memorandum may be made by mutual written agreement of the Parties and are considered an integral part thereof.

4.6. The Memorandum consists of 3 (three) pages in Armenian and English and is sealed in 2 (two) copies with equal legal force. Each Party is given one copy, which are equal. In case of any inconsistency between the Armenian and English texts, the Armenian text prevails.

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ

ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 12

Տնօրեն՝ Լ. Մնացականյան

(ստորագրություն)

Կողմ 2

«Ինտոֆֆ Արմենիա» կրթամշակութային հասարակական կազմակերպություն

ՀՀ, ք. Երևան, Մ. Չայլախյան 41/1

Տնօրեն՝ Եղիշե Դաշտոյան

(ստորագրություն)

5. ADDRESSES AND SIGNATURES OF THE PARTIES

Party 1

“Republican Pedagogical-Psychological Center” SNCO

12 Kajaznuni str., Yerevan, RA

Director: L. Mnatsakanyan

(signature)

Party 2

“Intoff Armenia” Educational and Cultural Non-Governmental Organization

M. Chailakhyan 41/1, Yerevan, RA

Director: Egishe Dashtoyan

(signature)